ՀՐԱՆՏ ԵՆԳԻԲԱՐՅԱՆ

Ծնվել է 1929թ., Երևանում:

1947թ. գերազանցությամբ ավարտել է Երևանի թիվ 40 միջնակարգ դպրոցը և ընդունվել Կ. Մարքսի անվան պոլիտեխնիկական ինստիտուտի մեխանիկայի ֆակուլտետը:

1952թ. ավարտելով ինստիտուտը՝ գործուղվել է Լենինգրադ (այժմ՝ Սանկտ Պետերբուրգ):

1954թ. վերադարձել է Հայաստան և աշխատել Երևանի Էլեկտրալամպերի գործարանում, ապա՝ <<Հայէլեկտրալույս>> արտադրական միավորումում, Կիրովականի (այժմ՝ Վանաձոր) <<Ավտոմատիկա>> ԳՀ ինստիտուտում՝ որպես ավագ ինժեներ, 1957-1969թթ.՝ Երևանի էլեկտրալամպերի գործարանի տեխնիկական բաժնի ավագ ինժեներ, ապա՝ գործարանի գլխավոր ինժեներ:

1969թ. նշանակվել է Երևանի <<Հայէլեկտրալույս>> արտադրական միավորման գլխավոր տնօրեն, 1974թ.՝ ՀԽՍՀ Պետպլանի նախագահի առաջին տեղակալ՝ մասնակցելով ժողովրդական տնտեսության համալիր ծրագրման խնդրի լուծմանը:

1975թ. մարտի 18-ին ընտրվել է Երևանի քաղխորհրդի գործկոմի նախագահ: Հ. Ենգիբարյանին շնորհվել է ՀԽՍՀ վաստակավոր ինժեների պատվավոր կոչում (1968): Մահացել է 1975 թվականին: